ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱԲՈՎՅԱՆԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ №10 ՀԻՄՆԱՍԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հեռ. / 374 222 / 2-18–61, 2–11-91

E mail: abovyan10@schools.am

ք.Աբովյան, Ս.Մնացականյանի 5

№131

,,04,, 12 2023 թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Ֆոտոն» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ն. Պետրոսյանին

Հարգելի **Ն. Պետրոսյան**

«Աբովյանի Վ.Համբարձումյանի անվ. №10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի օգոստոսի 28-ին կնքված **ԱԲ10-ԳՀԱՊՁԲ-23/3-3** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, որոնց մատակարարման ժամկետը Պայմանագրով սահմանված է՝ Պատվիրատուից պատվերը ստանալուն 3 աշխատանքային օրվա ընթացում:

2023թ.-ի նոյեմբերի 22-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է պատվեր՝ պահանջագիր **ԱԲ10-ԳՀԱՊՁԲ-23/3-3** ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների որոշակի քանակությամբ մատակարարման համար, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում մասնակցի կողմից մատակարարումը թերի է իրականացվել:

2023թ.-ի նոյեմբերի 30-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է ծանուցում՝ վերոնշյալ թերի մատակարարված ապրանքները ամբողջությամբ մատակարարելու մասին, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Աբովյանի Վ.Համբարձումյանի անվ. №10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ը հարկադրված է 2023թ.-ի դեկտեմբերի 04-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (**ՀՀՖՆԳՎՀ/Հ 900108000036**):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում կայացնել:

«Աբովյանի Վ.Համբարձումյանի անվ. №10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի

Տնօրեն՝ **Ա.Ստեփանյան**